

**«Միխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

**ԻՄՊԱՆԵՐԵՆ
Առարկայական ծրագիր**

Ծրագիրը նախատեսված է իսպաներեն սովորել ցանկացողների և իսպաներենը տարբեր մակարդակով իմացողների համար՝ որպես 3-րդ օտար լեզու կամ որպես լրացուցիչ կրթություն՝ անկախ սովորողների տարիքից: Նպատակը՝ հաղորդակցվելու կարողությունների մեծացում, հասակակիցների հետ համատեղ նախագծերի իրականացման հնարավորություն, համաշխարհային մակարդակով 3-րդ ամենատարածված լեզվի յուրացում:

Նպատակը

Ընտրությամբ երրորդ լեզվի ուսուցումը, որպես անհատի կրթական պատվեր, մասնագիտական կողմնորոշման գործոն է, տեղեկատվական աղբյուրներից օգտվելու, հասակակիցների հետ համատեղ ծրագրեր իրականացնելու համար՝ միջոց է: Իսպաներենը (իսպաներեն՝ *español* [էսպանյո], *castellano* [կաստեյանո]) հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական խմբի արևմտա-իտալական ճյուղին պատկանող լեզու է, որը ծագել է Իսպանիայի հյուսիսային շրջանում: Այն պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի Իսպանիայում, Լատինական Ամերիկայի 19 երկրներում (Արգենտինա, Բելիզ, Բոլիվիա, Գվատեմալա, Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Սալվադոր, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Կուբա, Հոնդուրաս, Մեքսիկա, Նիկարագուա, Չիլի, Պանամա, Պարագվայ, Պերու, Պուերտո Ռիկո, Վենեսուելա, Ուրուգվայ), Հասարակային Գվինեայում և Ֆիլիպիններում: Իսպաներենը մայրենի լեզու է հանդիսանում 500 միլիոն մարդու համար, իսկ ընդհանուր հաշվով իսպաներեն խոսում է 550–600 միլիոն մարդ, ինչը նրան դնում է երկրորդ-երրորդ տեղում (չինարենի Մանդարին բարբառից ու անգլերենից հետո): Ըստ վերոնշյալ հիմքերի սովորողը, ընտրելով իսպաներենը՝ որպես երրորդ օտար լեզու, սովորում է համաշխարհային մասշտաբ և լայն կիրառման ոլորտ ունեցող լեզու:

Իսպանիայի այլ լեզուները

Իսպաներենը համարվում է Իսպանիայի պետական լեզուն, սակայն իսպաներենին հավասարազոր և զուգահեռ գործածվում են ևս 3 լեզուներ՝

Գալեգերեն՝ Իսպանիայի հյուսիս-արևմուտքում՝ Գալիսիա պրովինսիայում (Galiza)

Բասկերեն՝ Իսպանիայի հյուսիսում՝ Բասկերի Երկիր պրովինսիայում (País de Vasco)

Կատալաներեն՝ Իսպանիայի արևմտյան հատվածում՝ Կատալոնյա պրովինսիայում (Cataluña)

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր

Խնդիրները

Հնդեվրոպական լեզվաընտանիքի ռումանական խմբի արևմտա-իտալական ճյուղին պատկանող լեզվի ուսուցում, հնդեվրոպական լեզվաընտանիքի այլ լեզուների ճանաչում և տիպաբանական համեմատություն, լեզվազգացողության, լեզուների համեմատության և լեզվաբանական այլ հետազոտական հմտությունների զարգացում, իսպանախոս աշխարհի մշակութային արժեքների ծանոթացում, միջմշակութային հաղորդակցության հաստատում:

Ուսումնական միջավայրը

Խմբի մեծությունը՝ 10-12 սովորող: Ուսուցման կազմակերպման համար կաբինետում անհրաժեշտ են տպագիր ու թվային համապատասխան գրականություն, տեսա-լսողական թվային միջոցներ՝ էլ. գրատախտակ, պրոյեկտոր, ձայնային ու ժեղարարներ, ձայնագրիչ, համացանց (անլար կապի տարածք): Սովորող ուսումնական պարապմունքին պիտի մասնակցի անհատական նախընտրված կամ ներթափանցիկ:

Որպես ուսումնական նյութ՝ օգտագործվում են՝ մասնագիտական գրականություն, դասագիրք ոչ իսպանախոս ուսանողների համար, քերականության դասագիրք, իսպաներեն-հայերեն գրուցարան, իսպաներեն-անգլերեն գրուցարան, աուդիո և վիդեո նյութեր, տեղեկատվական կայքեր:

Սովորողի ուսումնական գործունեության ձևերը

Սովորողները ուսումնական պարապմունքների ժամանակ յուրացնում են լեզվական գիտելիքներ, կարդում-լսում-դիտում են ուսուցչի կողմից ընտրված նյութերը և կատարում դրանց վերաբերյալ անհրաժեշտ աշխատանքը, mskh.am-ի իսպաներեն էջում նյութեր տեղադրում: Մասնակցում են մեդիաօլիմպիադաների, մրցույթների: Ուսումնական գործունեությունը գնահատվում է սովորողի ուսումնական փաթեթի միջոցով, որը տեղադրվում է սովորողի փոստի անհատական էջում:

Հ.Գ. Այն աշակերտները, ովքեր լավ են տիրապետում անգլերեն լեզվին՝ քերականական նյութերը նրանց կբացատրվեն անգլերեն լեզվով: Գրականության ցուցակում նաև ունենք իսպաներեն-անգլերեն դասագիրք:

Կարողություններ, հմտություններ

Լսելով հասկանալ առօրյա ծանոթ թեմաներով երկխոսությունը կամ գրույցը:

Երկխոսություն վարել, սկսել, շարունակել և ավարտել պարզ գրույցներ:

Բանավոր և գրավոր պատմել դեպքերի, իրադարձությունների, հույզերիկամ զգացմունքների մասին: Օգտվել հայերեն-իսպաներեն, իսպաներեն-հայերեն բառարաններից, գրուցարաններից: Կարդալ, ընդհանուր առմամբ հասկանալ գրական, լրատվական տեքստեր: Ձևավորել և զարգացնել հաղորդակցական կարողությունները խոսքային գործունեության բոլոր տեսակներում՝ ունկնդրել, խոսել, ընթերցել և այլն:

Առարկայական գիտելիք

Պատմական ակնարկ Դժվար է որոշել իսպանախոսների ճշգրիտ թիվը, քանզի իսպաներենին պաշտոնական լեզվի կարգավիճակ տված երկրներում ապրող ոչ բոլոր մարդիկ են խոսում այդ լեզվով, ի հավելում կարող են վստահաբար նշել, որ ներկայումս իսպաներենը աշխարհի ամենագործածվող լեզուներից մեկն է: Այն Իսպանիայի, Հասարակածային Գվինեայի և Լատինոամերիկյան 19 երկրների պետական լեզուն է համարվում: Իսպաներեն խոսում են նաև Ֆիլիպիններում՝ անգլերենի հետ համատեղ:

**«Միխիթար Մեքաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց. անհատի կրթական պատվեր**

Իսպաներենը եկել է Լատինական Ամերիկա 15-րդ դարում: Լատինական Ամերիկայի իսպանախոս երկրներում իսպաներենին զուգահեռ կիրառվում են նաև մի շարք բնիկ լեզուներ, ինչպիսիք են՝ náhuatl և maya Մեքսիկայում, araucano Չիլիում, aymará Պերուում և Բոլիվիայում, quechua Բոլիվիայում, Արգենտինայում, Էկուադորում, guaraní Պարագուայում: Ներկայիս իսպաներենը ծագել է Իբերյան թերակղզու հյուսիս-կենտրոնական մասում՝ մեռած լեզու համարվող խոսակցական լատիներենից: Հետագայում՝ տարածվելով դեպի թերակղզու հարավային՝ միջերկրածովյան հատվածը: Այսօր այն 21 երկրների եւ բազմաթիվ միջազգային կազմակերպությունների պաշտոնական լեզուն է: Այն հանդիսանում է նաեւ Եվրոմիության և Միավորված ազգերի կազմակերպության վեց պաշտոնական լեզուներից մեկը:

ԱՄՆ-ում չլինելով պետական լեզու՝ իսպանախոսների թիվը օրեցօր ավելանում է՝ որի արդյունքում էլ մեծ քայլերով զարգանում է Spanglish (Spanish + English) խարնակեզու երևույթը: Նմանատիպ երևույթ տեղի է ունենում նաև Բրազիլիայում, որտեղ հետաքրքրությունը իսպաներենի հանդեպ ավելանալով՝ զարգացնում է **portuñol** (Portugal+ Spanish) երևույթը: